Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի
Վ Ա Հ Ր Ա Մ Ա Բ Ե Ր Դ Ի
Հարություն Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ
կոդ 05802703

Հասցե՝ Շիրակի մարզ գ. Վահրամաբերդ 16փ, 2 շ, հեռ. 093444211

թիվ 53 «7» 06 2019 թ.

ՀՀ Շիրակի մարզպետ
Տ. Պետրոսյանին

Հարգելի պարոն մարզպետ

Հայտնում ենք Ձեզ, որ հայտարարվում է մրցույթ <<Վահրամաբերդի Հարություն Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Ֆիզկուլտուրա>> առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Հայտարարության տեքստը կցվում է:

Տնօրեն՝ Ս. Թորոսյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 09323-19
07. 06. 19 թ.

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի <<Վահրամաբերդի Հ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Ֆիզկուլտուրա>> առարկայի (շաբաթական 12 դասաժամ, ամսական հաշվարկված աշխատավարձը՝ 58091 դրամ) թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդված 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագիր
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
6. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)
7. Որակավորման տարակարգ (առկայության դեպքում)
8. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
9. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ
10. Ներկայացվում են բոլոր փաստաթղթերի բնօրինակները և պատճեները:

Փաստաթղթերն ընդունվում են **2019թ. հունիսի 11-ից մինչև հուլիսի 9-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2019 թվականի հուլիսի 15-ին՝ ժամը 11:00-ին**, Շիրակի մարզի <<Վահրամաբերդի Հ. Մկրտչյանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ –ում. հասցեն՝ գ. Վահրամաբերդ, 16-րդ փողոց՝ շենք 2:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 444-211 հեռախոսահամարով: